տէի հրահանգները պարտադիր են Հայաստանի Կոմիտէի համար, և սա պէտք է ի կատար ածէ, եթէ հակառակ էլ լինի։ Ահա իսկական պատկերը գործի, որ ըմբռնել է կառավարութիւնը և միջոցներ է ձեռք առել, բայց, ցաւօք սրտի, կիսատ։ Պէտք է կուել ամբողջ կազմակերպութեան դէմ, որպէսզի նա հնար չունենայ այժ դառնալու»։

Այս հարցապնդման առթիւ տեղի ունեցած վիճաբանութիւններից երեք խնդիր դառնում էր ակնյայտնի ու անհերքելի. նախ՝ որ հայ կոմունիստները Հայաստանի սահմաններում կատարում են գործօն աշխատանք՝ պետական յեղաշրջում առաջ բերելու նպատակով, երկրորդ՝ որ բոլշևիկների և թիւրքերի միջև գոյութիւն ունի իրական համաձայնութիւն, որի հետևանքով թիւրքերը պարտաւորւել են օգնել բոլշևիկներին Դէնիկինի դէմ, և, հետևաբար՝ երրորդ՝ բոլշևիկներին օգնութեան գնալիս՝ թիւրքերը պէտք է անցնեն Հայաստանի վրայով՝ նոր քայքայումների ու կոտորածի մատնելով մեր երկիրը։

Հայաստանում առանձնապէս մեծ անհանգստութիւն պատճառեց բոլշևիկ-քեմալական գործակցութիւնը։ Հայ կոմունիստները վրդովումով հերքում էին այդպիսի գործակցութեան գոյութիւնը, և մամուլի մէջ տարածւած լուրերը համարում էին «դաշնակների պրովոկացիայի» արդիւնք։ Այն օրերին հայ բոլշևիկները դեռ ամօթ էին համարում բարեկամութիւնը թիւրք ջարդարարների հետ։ Յետոյ՝ ժամանակները փոխուեցին—փոխուեցին և բարքերը...

Հայաստանի կառավարութիւնը, ինչպէս և Դաշնակցութեան բարձրագոյն մարմինը մէկից աւելի անգամներ քննութեան առաւ բոլշևիկ-քեմալական համաձայնութեան փաստը, ինչպէս և այդ փաստից բխելիք հետևանքները։ Պարզ էր, որ համաձայնութեան մէջ, ուղղակի կամ անուղղակի ձևով որոշ տեղ պէտք է ունենար և՛ Հայաստանը հէնց, թէկուզ, իր աշխարհագրական դիրքի պատճառով։ Իրերի առարկայական ընթացքը թելադրում էր միջոցներ ձեռք առնել, որպէսզի ապագայ իրադարձութիւնների պարագային՝ հայ ժողովուրդը ոտքի տակ չգնայ։ Այս մտահոգութեամբ, Դաշնակցութեան Բիւրօն, յունուարի սկզբներին Թիֆլիս ուղարկեց իր անդամներից երեքին — Ա. Ջամալեանին, Ռ. Տէր-Մինասեանին և Ս. Վրացեանին, որպէսզի յարաբերութեան մէջ մտնեն Ռուսաստանի կոմունիստական կուսակցութեան Կովկասեան բիւրօի հետ և պարզեն վերոյիշեալ հարցի մանրամասնութիւնները, ինչպէս նաև այդ հարցից բխելիք գործնական հնարաւորութիւնները։ Ցաւոնի էր, որ բոլշևիկների ղեկավարութեան կենտրոնը Թիֆլիսում էր, ուր գաղտնի ապրում էին մի շարք աչքի ընկնող կոմունիստ գործիչներ։ Հ. Յ. Դ. Բիւրօի անդամները մեկնեցին Թիֆլիս՝ ունենալով իրենց հետ բոլշևիկ-քեմալական համաձայնագրի պատճէնը։

Տեսակցութիւնը տեղի ունեցաւ Կովկասեան Բիւրօի ընդհանուր քարտուղար Հ. Նազարէթեանի հետ, և, վերջին հաշուով, խիստ ճնշիչ տպաւորութիւն թողեց։